ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային սփռման մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ լսողական ծրագրի հաճախականության օգտագործում:
2. Սփռման տարածքը և հաճախականությունը՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան՝ 98.7 ՄՀց, ք. Իջևան՝ 94.3 ՄՀց և ք. Բերդ՝ 99.7 ՄՀց: Ընդ որում՝ եթերում ինտերմոդուլյացիոն խանգարումները բացառելու նպատակով հաղորդակները պետք է տեղադրվեն նշված վայրերում առկա հեռուստաաշտարակներից առնվազն 2 կմ հեռավորությամբ կամ հաղորդակների ելքին տեղադրվեն լրացուցիչ շերտավոր զտիչներ:
3. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է՝
   1) հայտ (ձևը կցվում է),
   2) փաստաթուղթ՝ լսողական մեդիածառայություն մատուցողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ՝ անդրադառնալով հետևյալ չափանիշներին՝
   - սեփական արտադրության հաղորդումներին,
   - հայերեն հաղորդումներին,
   - բազմակարծությանը,
   - հայտատուի տեխնիկական և ֆինանսական հնարավորություններին,
   - աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությանը,
   - ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումներին,
   - գործող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողների դեպքում՝ գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորություններին համապատասխանությանը,
   3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,
   4) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ,
   5) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ,
   6) էթիկայի կանոնագիր,
   7) էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները,
   8) մրցույթին մասնակցելու համար 900005164588 հաշվեհամարին «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված 150 000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:
4. Հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են երեք նույնական փաթեթով՝ յուրաքանչյուրը թելակարված, համարակալված, վերջին թերթի հետնամասում, կարի վրա փակցված պիտակով՝ «Բաղկացած է ... թերթից» գրառմամբ («...» նշվում է թերթերի քանակը), ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում): Փաթեթները ներկայացվում են փակ ծրարով՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):
5. Հայտերն ընդունվում են 2026 թվականի հունիսի 8-ից մինչև հունիսի 29-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ը: Հայտերը և կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:
6. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010 52 94 06 հեռախոսահամարով կամ գրել licensing@tvradio.am էլ. փոստի հասցեով:

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի նախագահ

_____ին
(անուն, ազգանուն)

ՀԱՅՏ

Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու

Հայտատուի անվանումը

_____

Գտնվելու/հաշվառման վայրը

_____

Պետական գրանցման / հաշվառման համարը

_____

Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն

_____

Սփռման տարածքը

_____

Տեղեկություն հեղինակազորման վերաբերյալ

_____

☐ *Ծանոթացել եմ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին:*

Կից փաստաթղթեր՝ _____ *թերթ:*

Հայտատու _____ _____

(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

___ _____ _____

(օրը, ամիսը, տարեթիվը)